

եանի գործունեայ անձնաւորութիւնը և բեղմնաւոր կեանքը ազնիւ գործի համար նպատակաւոր ընթացքով կուող զինուորի օրինակով յիշեցրեց ամենքիս մէկ անգամ ևս որ Պ. Սեդրաքը եղել է մեր մէջ ճշմարիտ կրթութիւն տարածող առաջին մանկավարժը որ նա է եղել կանոնաւոր ուսուցման օրինաւոր դաստիարակութեան գործին նուիրուած ուսուցիչների ուսուցիչը։ Խօսքը վերջացրեց սրտազին բարեմաղթութիւններով ամենքիս կողմից ցանկալով նորան շուտափոյթ ապաքինումն և կրկին դարձ գէպ իւր ուսուցչական ամբիոնը։ Երբեք ի մանկավարժին նուիրուած այս խօսքերը մեծ ոգեւորութիւն յառաջ բերին հանդիսականների մէջ և բռն ծափահարութիւններն ու կէցցէները կրկին հնչեցին։ Այնուհետեւ հոգեւոր Տիրոջ գաւազանկիր Արժ. Կորիւն վարդապետը կարգաց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը որով Ամենայն Հայոց Կաթողիկոսը յայտնում էր իւր գոհունակութիւնը վաստակաւոր գործչին և տալիս է նորան իւր Հայրապետական օրհնութիւնը։ Մեր յարգելի բանաստեղծ պարոն Ծովհաննիսեանն էլ մի գողտրիկ ոտանաւոր նուէր բերեց Հայրապետական կոնդակից յետոյ։ Հանդիսին ներկայ էր նաեւ Երեւանի Թեմական Դպրանոցի տեսուչ՝ հայր Բենիկը որ իւր հետ բերել էր դպրոցի ուսուցչական խմբի մեծարգոյ յօրեկանին ձօնած ուղերձը։ Հայր Բենիկը այս ուղերձը անձամբ կարդաց և որպէս Պ. Մանդինեանի նախկին աշակերտ քանի մի սրտաշարժ խօսքեր էլ իւր կողմից աւելացրեց։

Զգացմունքների արտայայտութեան մէջ անմասն չմնացին նաեւ Պ. Մանդինեանի նորագոյն աշակերտները՝ Ծեմարանիս արդի ուսանողները։ Բ. խարանցիներից մին ի գիմաց բոլոր աշակերտների մի քանի խօսք ուղղեց իւր ուսուցչին և մատոյց ընկերների պատրաստած ընծան։ Ընծաներ մատուցին նաեւ Ա. և Գ. խարանի սաները առանձին առանձին։ Ստացուել էին բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ Թիֆլիսից, Բագուից, Մոսկուայից, Շուշուց, Նոր—Նախիջևանից, Նուխուց և ինչ որոնցից միայն մի մասը կարելի եղաւ հանդիսականների առաջ կարդալու։

Պ. Մանդինեան այս բոլոր ժամանակը լուս և մտադրաւ նստած էր իւր տեղը և մերթ ընդ մերթ միայն վեր էր կենում գէպ ինքն արտայայտուած ջերմ զգացմունքներին զինի համետ շարժմամբ շնորհակալութիւն անելու։ Ամենից վերջը միայն նա բարձրացաւ ամբիոն և զգացուած ձայնով սկսեց խօսել։ Նորա վերայ շատ խոր ապաւորութիւն էին արել ճառախօսները և ընդհանրապէս բոլոր հանդիսականների ջերմ վերաբերմունքը։ Նա մասնաւորապէս խօսքն ուղղեց իւր ամենակրտսեր սաներին Ծեմարանի աշակերտներին և յորդորեց յառաջ գնալ յառաջ անդադար անցնել յետ նայելու որպէս ինքն աշխատել է անել։ մաղթեց սակայն որ նոքա իր փիճակին չհասնեն երբեք այսինքն ստիպուած չլինին իրեն պէս սկսած գործը թողնել և հեռանալ երբ դեռ ոյժ են զգում իրենց մէջ։ Մեր յարգելի ուսուցչի խօսքերից առհասարակ երեւում էր որ նորա համար շատ ծանր էր գործը թողնել և գնալը թէեւ գուցէ առ ժամանակ միայն երեւում էր որ դեռ շատ վառ է նորա մէջ գործելու տենչը աշխատելու փափագը։

Անշուշտ այդ զգացման շնորհիւ էլ նա 25 տարի շարունակ կուել է իւր հիւանդութեան հետ բայց ոչ մի անգամ նրա պտտածոսով գործը չի թողել։ Սակայն այսօր այլևս անհնարին է դարձել այդ կոխը և նա ստիպուած է հեռանալ։

Ես կարծում եմ նորան ծանաչող ամեն մի Հայի ցանկութիւնն է այժմ որ նա ցնայ առողջանայ շուտով և կրկին վերադառնայ իւր սիրած և մեզ ամենքիս համար օգտակար գործը շարունակելու։ Թէեւ զգուար է մեզ համար նորանից բաժանուելը բայց նորա առողջ մարմնով վերադառնալու և նոր եռանդով գործ սկսելու զիջեցիկ յուսով «բարի ծանապարհ» ենք մտալովում։

Բ. Մ.



ՀԱՅԿԱԿԱՆՔ*

ԺԸ

Հայելու Թարգմանութեան Թուակալից—1660—ընդամենը 8 տարի յետոյ 1668-ին Առակաղերքը Աղուեսաղերք վերտառութեամբ հրատարակուած է առաջին անգամ։

* Տես. Արարաց, 1900 թ. համար Ա. եր. 28։

Այդպիսի կարճ միջոցում՝ Հայեկին հարկաւ չէր կարող մեծ ազդեցութիւն ունենալ Ազուէսագրքի վրայ, սակայն այսու ամենայնիւ ձեռագիր Առաւիղաբերի և նման ժողովածուների վրայ շարունակուած է Հայեկու ազդեցութիւնը: Բերկինի հայ Զ-երից № 90-ը ունի մի հրաշապատում որ Մառի հրատարակութեան մէջ կրում է «Ոսկեգրեալ սիրտ» վերնագիրը: Ինձ թւում է թէ այդ մի խմբագրութիւն է Հայեկու ի մի ձուլուած երկու անհամ պատմութեանց (ծէ գլուխ 4-րդ պատմ. և ԿԳ. գլ. 3-րդ պատմ.):* Աւելի բացորոշ է Հայեկու մի ուրիշ պատմութեան ազդեցութիւնը: Այս զննեք ամբողջութեամբ.

ՀԱՅԵԼԻ, ՔԼ. ԹԼ. ՎԱՍՆ ՆԱԽԱՆՁՈՒ, 3.

Այնչափ է շարութիւն նախանձուն, մինչ զի ոչ միայն այլում այլ և իւր անձին զմաս կամի. քան զի թագաւոր ոմն երբեմն խոստացաւ նախանձոտի ուրումն և միւսումն ա-
 5 զահի, թէ զինչ և խնդրեցեն ի նմանէ՝ տացէ նոցա, սակայն այնու կերպիւ թէ՛ որ վերջին խնդրեցէ՛ կրկին տացի նմա, եւ յորժամ երկոքեանն յապաղէին զխնդրին, թագաւորն հրամայեաց նախանձոտին զի նախ խնդ-
 10 րեցէ. և նա խնդրեաց զիւր՝ մէկ ակն հանել, զի միւսոյն զերկուսն հանիցեն, Բանդի ոչ կամեցաւ զբարի ինչ խնդրել, զի մի ընկերին կրկին պարգև տացէ (Ա ձեռագիր, էջ 119^ր):

Նախանձոտի այս պատմութիւնը շատ ժողովրդական է մեր մէջ, և շատ յաճախ օրինակ է բերում իբրեւ «հայկական ստեղծագործութիւն» — «հայկական ձեռագրութիւնը ապացուցանելու համար: Սակայն ինչպէս տեսնում ենք, այդ թարգմանուած է լիհերէնից, այս վերջինն էլ լատիներէնից, Բերկինը համեմատութեան համար և Առաւիղաբերի փոխառեալ խմբագրութիւնը Մառի հրատարակութեամբ:

*) Քրիստոնէայ գերու սիրտ ձեղնում են և զանում են սրտի մէջ Քրիստոսի պատկերը: Միւս պատմութեան մէջ՝ 14 տարեկան կոյս աղջիկը մանուկ Յիսուսի սիրտը մեղմում է և «քաջեայ զսիրտ նորա՝ ընդ մէջ հասեալ զգիմ» և ի մեծ ուսկի գրով գրեալ գայս ձեւ քանից, սիրտ զնեղ առաւել քան զիս ելն»: Միջնադարեան կաթողիկոսական հոգով, ինչպէս որ է և ամբողջ Հայեկին:

ՄԼԱ. ԵՐԿՈՒ ՆԱԽԱՆՁՆԵՂԻՐ ԾԱՌԱՅԷ ԹԱԳԱՆՈՐԻ *

[19 A]

Թագաւոր ոմն գիտեր զգինուորն իւր, զի ծածուկ նախանձ ունէին ընդ միմեանս. և ասէ թագաւորն ընդ մին, թէ զինչ կամիս՝ խնդրէ յինէն մեծութիւն, որ տամ քեզ, բայց
 5 քո ընկերին կրկին տամ քան զքոյդ, ասէ ի միտս իւր, թէ խնդրեմ ինձ մին բարի, նմա կրկին տա[յ] քան զիմն. և ասէ ցթագաւորն, թէ զիմ մին աչքս հան, որ զմիւսոյն զ. Բ. ն հանիցէ: (Հատոր II, էջ 260: Սոյն
 10 այս իջում նոյն պատմութիւնը աւելի ընդարձակ խմբագրութեամբ՝ ՄԼԱ. 102 D ՎԱՍՆ ՆԱԽԱՆՁՈՒՄՈՒՄ վերնագրով):

Բայց աւելի ուշագրութեան արժանի է Հայեկուց եղած մի ուրիշ փոխառութիւն: Մառի D ձեռագիրը (Էջմ. № 12, գրուած 1669-ին) Եովսափու և Բարադամի յայտնի վիպասանութիւնից փոխ առնուած մի առակ ունի, որ Մառն հրատարակել է «Տխուր թագաւոր» վերադասութեամբ (I հատոր, § 279, 300, 302. II հատ. ՄԶԲ, 126 D): Նոյն այդ առակը փոքր ինչ տարբեր խմբագրութեամբ, ուրիշ ձեռագրից (Ազիւ. Մշ. Արմ. № 3) հրատարակել է էլի Մառը իւր մի ուրիշ գրուածքում (Армянско-Груз. Материалы для истории душ пов. о вараамѣ и Юасафѣ, 1897, արտատպ. Зап. Вост. отд. имп. рус. Арх. общ. Томъ XI-ից): Տխուր թագաւորի նիւթը իսկ որ Եովսափու վիպասանութեան առաջին առակիցն է*, բայց խմբագրութիւնը շատ տարբեր է և ընդարձակ մանրամասնութիւններով: Այնպէս որ Առաւիղաբերի Տխուր թագաւորի պատմութիւնը չէ կարող առնուած լինել Եովսափու վիպասանութեան հայ թարգմանութիւնից: Նոյնը պիտի տեսել Մառի հրատարակած և միւս վարիանտի վերաբերութեամբ: Մինչդեռ Մառի երկու հրատարակութիւններն էլ շատ մօտ են իրենց բոլոր մանրամասնութիւններով Հայեկու հեռեւեալ պատմութեանը, որն անշուշտ իւր կողմից ծագում է Եովսափու վիպասանութեան արեւմտեան բազմաթիւ վարիանտների մէկից**:

*) Վերնագիրը Մառիմն էւ «նախանձախնդիր» անշարժ է, յաւ կը լինէր ասել «նախանձ»:

**) Տես Նկարագրութիւն Հնդկաւարական Վարդի Եովսափու, որդւոյ քաջաւորին Հնդկաց, ճրագ. Մեւ.

ՀԱՅԵԼԻ, ՅԱՂԱԳՍ ԾԻՒԾԱԿԵԼՈՅ
ԳԼՈՒԽ ԼԶ, 1.

Մտանալք ժամանակագրութեանց պատմեն
սակս ուրումն թագաւորի որ հազիւ կամ
ոչ երբեք ոչ ծիծաղէր, Իշխանք և նախարարք
աղաչեցին զեղբայր թագաւորին, զի տեղե-
կասցի և իմասցի զպատճառ արամութեանն
արքայի. թէ վասն էր հազիւ կամ ոչ երբեք
ոչ ծիծաղի, այլ միշտ տխուր է և տրտում
զօր անցուցանէ: Պատասխանի [ետ] թագա-
ւորն եղբորն իւրում. թէ յայլ աւուր
ծանուցից քեզ, Յետ այսորիկ թագաւորն
հրամայեաց խորագոյն վիհ փորել և մինչև
ցեղան զայն կայծակամբ հրոյ լնուլ. ի վերայ
հորոյն սասց զաթոռ դնել. հին և փոխալ
և ի վերայ աթոռոյն սուր երկայրի կտիւն
զարակ թեւէ: Մերձ առ նմին հրամայեաց
զսեղան պատրաստել լի ամենայն զանազան
կերակրովք և անուշահամ գինւով: Եւ զեղ-
բայր իւր նստոյց ի վերայ այնր աթոռոյն,
Զորս արս սուսերամերկս շուրջ զնովաւ կա-
ցոյց. մին ի թիկանց, զերկրորդն յառաջոյ,
երրորդն յաջմէ և չորրորդն յահեկէ, որք
զուսեռս իւրեանց մերձ առ նմին եղին: Եւ
հրամայեաց զամենայն քնարս և նուագարանս
առաջի նորս երգել, Եւ ասէ թագաւորն
ցեղբայր իւր. Ուրախ լիւր և զուարճացիր,
կեր, արբ և բերկրեցի սիրտ քո: Եւ նա
ասէ ցեղագաւորն. Զիարդ կարիցեմ ուրախա-
նալ կամ ծիծաղիլ, որ յամենայն կողմանց
ի մեծի անձկութեանս եմ. եթէ նայիմ ի խո-
նարհ՝ տեսանեմ զհօւրս եթէ կամիցիմ մեր-
ձենալ առ սեղանս՝ աթոռս փոխալ բեկանի և
ի հօւրն անկանիմ, եթէ հայեցայց ի վեր՝
տեսանեմ զսուր մերկ կտիւնալ զարակ թեւէ,
եթէ հայեցայց յառաջի իմ՝ կամ յետկոյս,
յաջմէ կամ յահեկէ՝ յամենայն կողմանց
պաշարեալ եմ մերկ սուսերօք. և այսպէս
որովհետեւ անկեալ կամ ի մէջ այսպիսի նե-
ղութեանց՝ ոչ ուտելի, ոչ ըմպելի, ոչ ուրա-
խանալ կամիմ: Եայնժամ թագաւորն ասէ
ցեղբայրն. Որպէս գուցա այժմ նոյնպէս և
ես յամենայն ժամ: Քանզի եթէ հայիմ
ի վեր՝ անդ տեսանեմ զգատաւորն իմ, որ
զիս զատեցոց է և նմա համարս տալոց եմ
յամենայն խորհրդոց, բանից և գործոց իմոց
եթէ նայիմ ի խոնարհ՝ զմտաւ ածեմ զհօւրն
զգոխոց և զտանջանս զատապարտեցոյ, ընդ

որս ի յախտեան զատապարտեց եմ. եթէ
հանգերձ միով մահապառ մեղօք յաստի աշ-
խարհէս ելանիցեմ: Եթէ նայիմ զհետ իմ՝
տեսանեմ զմեզս իմ զորս ընդդէմ Աստու-
ծոյ կատարեցի և զժամանակ վայրագար
անցուցի. եթէ նայիմ յառաջեւ իմ՝
ի միտ ածեմ զմահ իմ, առ որ մեր-
ձենամ զօր հանապազ և ոչ գիտեմ զժամ
և զտեղի մահուն իմոյ, Եթէ նայիմ յահեկէ՝
տեսանեմ զդէս, որք ի տուէ և ի գիշերի
խնդրեն զանձն իմ և հակառակ կան փրկու-
թեան իմոյ, Եթէ նայիմ յաջմէ՝ տեսանեմ
զհրեշտակս Աստուծոյ, որք միշտ զբարի խոր-
խուրդս ինձ տային և ի չար ծանապարհէ զիս
զարձուցանէին: որոց աւանդ ոչ արարի բա-
ւական և ոչ գնացի զհետ բարի խրատոց
նոցա: Արդ՝ յորժամ զայս ամենայն յիս և
չուրջ զինն խորհիմ զիարդ կարիցեմ՝ ու-
րախանալ յայսմ աշխարհիս, կամ իւրիւր
զուարճացի սիրտ իմ: (Ա ձեռ. էջ 74ա—
75ա):

Նոյն փառք աթոռս տակը կրակ, վե-
րեւից կախուած սուր չորս կողմից չորս
ցցուած սրեր ևն. ևն. ունին Մառի երկու
վարխաններն էլ, բայց այդպիսի մանրամաս-
նութիւններ չունին հայ Յովսէփի ոչ ըն-
դարձակր ոչ համառօտք ոչ չափակաւ: Ան-
կասկած է, որ Առակազրքի Տխուր թագա-
ւորի և նրա միւս վարխանի մայրը Հոյե-
լին է: Ուրեմն այդ պատմութիւնն եկել է
մեզ Արեւմուտքից լեհական ծանապարհով:

Հայիլու ազդեցութիւնը այսչափով էլ
չէ վերջանում: Եղբայր որ ապագայ ու-
սումնասիրութիւնները գեռ շատ բան բաց
կանեն մեր զանազան ժողովածուներում այս
ծանապարհով Արեւմուտքից եկած և անշուշտ
այդ միջնադարեան արեւմտեան ազդեցութիւնը
անհամեմատ աւելի մեծ է եղել, քան թէ
մինչև այժմ կարելի էր ենթադրել:

Հայիլու բնագիրը թարգմանչի վկայու-
թեամբ, ինչպէս տեսանք, եղել է լեհերէն,
իսկ լեհերէնը իւր կողմից թարգմանութիւն է
լատիներէնից: Մեր ծրագրից դուրս է օտար
բնագրերով զբաղուիլ այդ արդէն առանձին
հետազօտութեան նիւթ պէտք է կազմէ մա-
նաւանդ որ մենք պէտք եղած բոլոր զբե-
րիցն էլ գուրկ ենք և ոչ մի հնարաւորու-
թիւն չունինք, զոնէ կարեւորները ձեռք բե-

դրդ. Տ. Մովսէսեան, Վաղարշ. 1898, էջ 19: Նոյն
վկայականութեան համապօր, յայտնաւորման վերջում՝
շատ անգամ հրատարակուած այլ եւ Առ. Բաղդեցու ա-
ռաջափակման Տեղ. Մովսէսեանի հրատարակման վերջում, էջ 139:

րելու, ուստի և ատիպուած սահմանափակեցինք մեր հետազոտութիւնները միմայն հայ բնագրերով: Սակայն աւելորդ չէ մի քանի համառօտ տեղեկութիւն օտար բնագրերի մասին, առնելով Բաղդհատուրի և Սֆրոնի հանրագիտակ Բառ.-ից (8-ես Вилкое Зерцало բառը): Առանց օտար բնագիր տեսնելու, ենթադրութեամբ միայն նոյնացնելով մեր Հայերէն Зерцало-ի հետ, պէտք է տեսնանք, որ լատին սկզբնագիրը 1480 թուի մօտերը հաւաքուել է մի անծանօթի ձեռքով 80-ից աւելի հեղինակներից, յետոյ այդ սկզբնագիրը ընդարձակուել է եզուիտ (յիսուսեան կարգից) Յովհ. Մայորի և նմանապէս եզուիտ Անտոն Դաւրոյցիովի ձեռքով (Іоаннъ Майоръ, Антонъ Даврольцій):

Եզուիտ Սիմէոն Վիսոցկին (Симеонъ Висоцкій) լատիներէնից թարգմանել է լեհերէն և երրորդ տպագրութեամբ հրատարակել 1633-ին: Ինչպէս տեսանք, երեւի այդ Վիսոցկու լեհերէն բնագրից թարգմանուել է Ստ. Լեհացու ձեռքով հայերէնը 1660-ին: Իսկ եօթը տարի յետոյ միայն ռուսաց ցար Ալեքսէյ Միխայլովիչի ցանկութեամբ և հրամանով 1667-ին թարգմանուել է լեհերէնից սլովենո—ռուսերէն: Ռուս Ջերցալոն (Հայերէն) պահուած է զանազան խմբագրութեամբ և չափերով, մէկը 652, միւսը 781, երրորդը 821 զուխներով ելն. (հմտ. նաև П. Вадимировъ, Чтен. Общ. Ист. и Др. 1883, նաև առանձին): Կաթողիկական-եզուիտական զորոշմը պահպանուած է ոչ միայն յունադաւան ռուսների թարգմանութեան մէջ, այլ նաև հայերէնում նոյնութեամբ, անխափառ երեւի առանց որ և է փոփոխութեան: Եւ այդ արգելք չէ եղել, որ ոչ միայն շատ կանուխ հրատարակուէր հայ թարգմանութիւնը, 1702 թուին*, այլ և լինէր շատ ժողովրդական: Մանկութիւնից ինձ ծանօթ են եղել իրրեւ ժողովրդական առակ Հայերու պատմութիւններից մի քանիսը: Վերեւումն էլ տեսանք շատ ժողովրդական Նախանձտի պատմութիւնը: Նմուշի համար դենք այստեղ այդպիսի նորից երկու պատմութիւն:

ՀԱՅԵՂԻ, ՅԱՂԱՂԻ ԿԱՄԱՊԵՇՏՈՒԹԵԱՆ ԳԼ. ԼԷ.

Ա. Այր ոմն ընդ կնոջ խրոմ երթար երբեմն ընդ արտորայս և ասէ ցնա՝ Տեսանե՛ս զիարդ գեղեցկապէս և պատշաճարար արտս հնձեալ է, և կինն ընդդիմարար ասէ՝ Ոչ է հնձեալ 5. այլ խուզեալ, հակառակ կալով բանիցն առն իւրոյ, եւ յորժամ այրն ասէր թէ հնձեալ է և կինն ասէր թէ խուզեալ է, բարկացեալ այրն ընկէց զնա ի ջուրն: Արդ իրրեւ այլ ոչ կարաց խօսիլ՝ և հան զձեռն ի 10 ջրոյն նշան տալով մատամբ ի կերպ մկրտաթի՝ ցուցանելով մինչև ի մահ թէ արտն խուզեալ է.

Բ. Գարձեալ այլ ոմն ուներ կին խիստ ինքնահաւան և կամապաշտ և յորժամ անկաւ ի գետ և խեղդեցաւ, այրն խեղդէր զնա ընդդէմ ջրոյն զնալով, Հարցին ցնա մարդիկ, 5 թէ Վասն է՞ր ընդդէմ ջրոյդ խեղդես, պատասխանի ետ. Վին[ն] իմ համապագ էր ինձ հակառակ բերանով և ար[գ]եամբ, արդ՝ զորօրինակ առնէր ի կենդանութեան՝ նոյնպէս կարծեմ թէ զկնի մահուան արար, և 10 այսպէս հաւատամ (2. հաւատալով), զի գնաց ընդդէմ ջրոյս» (Ա. 2. էջ 75ա-բ):

Այս պատմութիւններից առաջինը, իրրեւ զուտ ժողովրդական անեկդոս, զրի է առնուած մինչև իսկ զոկերէն, տես Ս. Սարգսեանցի Ազուլիցոց Բարբառը, Մոսկ. 1883, մասն II, էջ 49. Մոյն մարդի մոյն շօտ հուշած կնակ այնելամ ելն.)* Զանազան տղազրական յօդուածներում, տղազրեալ ժողովածուներում, օրացոյցներում, էջիմերախներում և այլ նման հրատարակութեանց մէջ*, առանց մեծ բխի կարելի է գուշակել, որ անտարակցս կլինին Հայերուց ուղղակի կամ անուղղակի փոխառութիւններ, բայց այդ արդէն մեր ուսումնասիրութեան ծրագրից դուրս է: Մեր նպատակն էր խօշոր գծելով հիմնական կէտերին մասնանիշ լինել, մանրամասնութիւնները թողնելով յետագայ ուսումնասիրողներին:

Բայց վերջացնելուց առաջ՝ մի ոչ անկարելիոր զիտողութիւն, հայերու սկզբնագիրն

*) Նախապէս կարողովոսի օրով, երբ միառուսակ ռօմաւորները գործում էին երեսանում. (Այրարատ, էջ 233):

*) Նոյն անեկդոսը շատ է օտարմամբ ևւ սուսաց մէջ, ծագելով սուս Մեծ-Հայկոյց. сноръ мучка со женою покована на землю или построжена, «ևս վերեւ» յիշումը Հանրագ. Բռ-ի յօդումը:

**) Օրինակի համար Վարապիտայի և Թագուտի պատմ.-ը (Հայկ. գր. ԻԶ. 1):

ինքը կազմուած լինելով իրրե հաւաքածու զանազան հեղինակներից, անշուշտ կունենայ և ունի շատ պատմութիւններ վարք Հաւանցներից, յոյն-հոփմէական անեկզոաներից, փիլիսոփաներից և այլ նմաններ, որոնք բոլորովին անկախ Հայելուց, բոլորովին ուրիշ աղբիւրներից՝ շատ կանուխ արդէն յայտնի են հայ մատենագրութեան մէջ, մանաւանդ ասոսներէնից և յունարէնից հին և միջնադարեան թարգմանութեամբ, ուստի և նիւթի նոյնութիւնը միայն բաւական չէ՝ որ և է պատմութիւն կամ առակ հայերէնում՝ Հայելուց բխած համարելու համար։ Նիւթի նոյնութիւնը կամ նմանութիւնը բացատրուած է սկզբնական աղբիւրի նոյնութեամբ առանց որ և է անմիջական կապի Հայելու և հայ բնագրի միջև։ Որ և է կախումն կամ առնչութիւն ապացուցանելու համար անհրաժեշտ է բացի բովանդակութեան նոյնութիւնից նաև անժխտելի նմանութիւն խմբագրութեան և լեզուի մէջ։ Առաջնորդուելով այս տեսակէտով մենք զանց առանք նշանակել Հայելու շատ կտորների բովանդակութեան նրմանութիւնը հայ այս կամ այն գրաւոր հատուածի հետ։ Միայն իրրե նմուշ զնում ենք այստեղ մեր ուսումնասիրութեան վերջում այդպիսի երկու պատմութիւն Հայելուց, նոյն բովանդակութեամբ բայց շատ տարբեր խմբագրութեամբ և անտարակոյս բոլորովին անկախ Հայելուց Աղուէսագիրքն ունի երկու առակ, որոնցից առաջինը կրկին խմբագրութեամբ Աղուէսագրքի այդ առակներն են Մառի հրատարակութեամբ՝

1 ճԻ. ԹԱԳԱՆՈՐ ԵՒ ԲԵՌՈՐԳԻՆ ԵՒ ՆԱՅԻՊ (120 V=31 ag=9 Գէորգ. ցուց. № 792) *

ուրիշ խմբագրութիւն

ՃԺԹ. ԵՐԵԲ ԲԱՆԲ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ

(119 V=116 I=125 ag)

2 ՃԻԱ. ԱՂԱԻԹԱՍԷՐ ՊԱՏԱՆԻ ԵՒ ԿԱՆԱՐԻ

* Այս առակը կայ նաև՝ սոյն հետազոտութեան ժամանակ իմ գտած՝ Առակների մի նոր ժողովածուի մէջ։ Այս նոր ժողովածուն ունի ընդ աւելն 40 առակ, որոնցից 9-դն է այժմ մեզ հաստիքող առակը, իսկ խմբագրութեամբ շատ աւելի մօտ ձգ-ին քան Կ-ին։ Տես Գեորգ. ցուց. № 792, էջ 260ա—289ա։ Մանրամասնորիւններ զանց ենք առնում։

(121 V=117 I=126 ag=32 Գէորգ. ցուց. № 792)

Բաղդատել ցանկացողը պէտք է զիմէ Մառի հրատարակութեանը, մենք շատանում ենք տալով միայն Հայելու բնագիրը։

1. ԱՆՅԵԼԻ, ՅԱՂԱԳՍ ՆԱՆԱՆՁՈՒ ԳԼ. ԾԱ. 2.

Զօրական ոմն յոյժ սիրելի Թագաւորին՝ տեսեալ զինքն մերձ իմաս, կոչեաց առ ինքն զորդի իւր և ասէ. Որդեակ, ահա ես ելանեմ յաշխարհէ աստի յուսացեալ յողորմութիւնն
5 Աստուծոյ, զքեզ թողով միամօր որդի. աղաչեցի զարքայն՝ զի զքեզ կարգեսցէ ի տեղի իմ, զամենայն սաացուածս քեզ միայնոյ թողում զիրատ (ձ. զի խրատ) իմ, կամիմ զի ամենայն (ձ. զամենայն) զգուշութեամբ պահեսցես, որքան զամենայն ոսկի եղիցի քեզ պատուաւ և օգտակար, նախ՝ որպէս կարօղ ես յամենայն աւուր զպատարագն մինչ ի վերջ լսիցես, երկրորդ՝ պահելով զսուրբ ամուսնութիւն՝ ամենասուրբ կուսին Մարիամ [ու] ջերմեռանդ սրտիւ ծառայեսցես զամենայն աւուրս կենաց քոց, և եթէ ոչ կամիցիս զայլ որ հարսն ունել բայց ամենամաքուր Աստուածածնէն՝ ևս առաւել սիրելի և բաղձալի ծառայ նմա եղիցիս, քանզի կուսութիւն ունի
20 զպտուղ հարկւրաւոր, (յ) ամուսնութիւն զերեսնաւոր և այլ [ու] թիւն վաթսնաւոր, Իսկ եթէ [որ] զատ յամուսնութենէ ի պղծագործութիւն անկանիցի, ոչ միայն պտուղ ոչ ունի, այլ աւելի քան զհեր գլխոյն պատուստեալ են նմա տանջանք յախտնական ի գոխս, Երրորդ՝ միշտ խնդասցիս ընդ խընդալն արքային և տիկնոջն և ողորոցիս ընդ ողբալն նոցա, Զայս պահեսցիր որդեակ որչափ կարողութիւնդ բաւեսցէ և յիշեսցիր զհօգի իմ, եւ զայս սաացեալ վախճանեցաւ։

Արդ՝ յորժամ եհաս (յ) որդին ի պատիւ հօր իւրոյ, ի մտի ունէր զկտակն և (զ) ամենայն զգուշութեամբ և ջերմեռանդութեամբ պահէր, ուստի սակս պարկեշտ և առաքիանասէր շարժմանց իւրոց յաշտ ամենեցունց էր սիրելի, եւ անշափ զամթ և զկուսութիւն սիրեաց, մինչ զի կուսանք նախնիք թագուհի [ու] յոյն ինքնայծար կամօք զանձինս իւրեանց
40 նմա մատուցանէին. յոյժ սաստիկ յանդիմանէր զնոսա և ի բաց վարէր։ Բայց վասն զի նախանձ բարւոյն պլլոյ սօփօր է շարժարեւ՝ մի ի ծառայից թագաւորին շարախօս եղև զնմանէ սակս կարծեցեալ սիրոյ ընդ թագուհւոյն, եւ
45 յորժամ ոչ հաւատաց թագաւորն՝ ասէ այրն նախանձոտ բանսարկուն. Այս եղիցի քեզ նը-

չան ճշմարիտ բանից իմոց՝ արա՛ ինչ պատճառ
 տրտմութեան տիկնոջդ և տեսցես զի առժա-
 մայն ընդ նմա մինչև յողջալ տրտմեցի։ Քան-
 50 զի զայն բազում անգամ ծանուցեալ էր ըստ
 խրատու հօր նորա։ Արար այնպէս թագաւո-
 րն և ետես զի անմեղ ծառայն այն տրտմեցաւ։
 Ապա եկն չարախօսն այն առ թագաւորն և
 ասէ։ Տէր իմ արքայ, ծանեալ զստուգութիւն
 55 բանից իմոց, արգ՝ զի առանց խոստութեան մե-
 ռանիցի, քանզի [ը]նա ամենեքեանն իրեւ ըզ-
 բարեբարոյ սիրեն, խրատ տամ քեզ՝ հրամա-
 յեա՛ ընդ երեկս մշակաց, թէ Ուրբ վաղ առա-
 ւօտն առ նոսա երթիցէ՝ զոր դու առաքեցես։
 60 զնա ի հնոց բորբոքեալ կրի ձգեցեն։ Հաճոյ
 եղև թագաւորին խրատն և հրամայեաց որպէս
 չարախօսն ասաց։

Արգ՝ ընդ առաւօտն ասէ թագաւորն ցանձեղ
 ծառայն. «Երթ ի հնոցն ուր զկիրն այրեն և
 65 ասացիւրպէս» փութանակի կատարեցէք ըզ-
 հրամանս թագաւորին, զոր յերեկ հրամայեալ
 է ձեզ, եւ նա առ ժամայն գնացեալ լուաւ
 զձայն զանկակի յեկեղեցւոյն առ ճանապար-
 հան, եմուտ ի ներս զի աղօթեցցէ ի ժամ
 70 պատարագի և աղօթելով առ սուրբ Աստուա-
 ծածին՝ զհոգի իւր և զմարմինն ի նա յանձն
 առնէր։ Եւ իսկոյն ի խնամոցն Աստուծոյ ե-
 մուտ ի քուն և զըրբ ժամ մի ննջեաց։

Թայնժամ չարախօսն նորա ասէ ցլթագաւորն.
 75 Հրամայեա՛ տէր իմ արքայ, զի երթայց և տե-
 սից թէ զինչ եղև։ Եւ հրամայեաց թագաւո-
 րն և նա հեծեալ ի ձի, փութանակի վազէր
 ի փռան կրի, ասելով՝ Աստարեցիք զհրամանս
 թագաւորին։ Եւ նոքա ասեն՝ Ո՛չ, սակայն ոչ
 80 յամենցուր։ Եւ առեալ զնա ձգեցին ի բոց
 հրոյն։ Եւ ահա եկն անմեղն այն և խնար-
 հութեամբ ասէ. Աստարեցիք զհրամայեալն
 ձեր յերեկեան աւուր, և նոքա ասեն՝ Այո՛ւ,
 85 եւ նա ոչինչ գիտելով վասն խրատուն՝ դար-
 ձաւ ի տուն։ Յերեկոյն յորժամ եհարց թա-
 գաւորն ցմշակսն, թէ Ընդէր ոչ ընկեցիք զայդ
 զօրական ի հնոցն, ետուն պատասխանի՝ Այլ
 որ յառաջագոյն քան զդա եկն և բոց եկեր
 զնա։

90 Թայնժամ թագաւորն յանդիմանեաց զանմեղն
 սակս յապաղելոյն. և նա ասէ՝ Փոքր ինչ
 մտի յեկեղեցի ի ժամ պատարագի յանձն
 առնելով զիս սուրբ Աստուածածնին, հայցե-
 լով ի նմանէ, զի պահեսցէ զիս ընդ հովանեան
 95 իւրով, զի զիմ խոստացեալ կուսութիւնս զոր
 մինչև ցայսօր ամբողջ ունիմ, մինչև ի վաղ-
 ծան անարատ կարիցեմ պահել, յետոյ ակա-
 մայ այնչափ անոյշ քնով ըմբռնեալ եղէ։ Մինչ
 զի համարէի թէ ի գրատն փափկութեան

100 տարեալ եղէ. ապա ի քնոյ զարթուցեալ ճե-
 ւով փութայի կատարել զհրաման արքայիդ։
 Թայնժամ թագաւորն ասէ. Զինչ ասես սա-
 կըս խոստացեալ կուսութեանդ, զի ես գիտա-
 ցի թէ ի վաղուց հետէ քանտ հասանիլ յա-
 105 նարժան բարեկամութեան թագուհւոյն, զի
 թէպէտ ոչ գիտեմ վասն անարժան գործոյդ,
 սակայն զնշան սիրոյ ընդ նմա ինքնին ծանեալ,
 մանաւանդ այնու, զի յորժամ թագուհին
 տրտմի և դու զտրտութիւն հանդերձ արտա-
 110 սուգ ցուցանես։ Թայնժամ զարմացեալ երի-
 դասարզն ասէ՝ Լա՛ւր ինձ տէր իմ արքայ, յոր-
 ժամ հայրն իմ մերձ էր ի մահ, զորմէ և դու
 քաջ գիտես, զի էր աստուածապաշտ և ար-
 քայիդ հաւատարիմ՝ ծառայ, զայս երիս խը-
 115 րատս առի ի նմանէ փոխանակ կտակի—և ա-
 սաց զնոսա առաջի թագաւորին—զայնոսիկ
 ըստ կարի իմում քանայի կատարել։ Թայն-
 ժամ թագաւորն յոյժ ուրախացաւ և ասաց
 նմա զամենայն որպիսութիւն նախանձուն և
 120 զխրատն որ վասն մահուան նորա։
 Ապա յայնմհետէ սիրեաց զնա թագաւորն ա-
 ռաւել քան զամենայն ծառայ։ Եւ նա փա-
 ռաւորելով զԱստուած ջերմեանդ սրտիւ ծա-
 ռայէր նմա և ամենասուրբ կուսին Մարիա-
 125 մու և երանելի մահուամբ փոխեցաւ ի Քրիս-
 տոս Աստուած յոյսն ամենայնի, որ է
 օրհնեալ յաւիտեանս։ Ամէն (Ա ձեռ. 1
 117^p—119^p)։

2. ՀԱՅԵԼԻ, ՅԱՂԱԳՈՒ ԽԱՅԻ ԶՕՐՈՒԹԵԼՆ ԳԼ. ԼԱ. 1.

Զամն քարտուղար իմաստուն և բարեսէր եր-
 5 բմն խարեաց կախարդ և տարաւ զնա ի տե-
 դին ուր կոչեալ էր զգէս, խոստանալով նմա
 մեծամեծ և բազում մեծութիւնս. և ահա
 ետես զեթովպացի մի մեծահասակ ի վերայ
 բարձրագահ աթոռոյ բազմեալ և շուրջ ըզ-
 10 նովաւ այլք եթովպացիք հանդերձ նիզակօք
 և զեզարդեամբք։

Թայնժամ մեծ եթովպացին այն կոչեաց ըզ-
 կախարդն ասելով. Զինչ է այդ պատանեակ,
 և նա պատասխանեաց՝ Տէր իմ ծառայ ձեր է։

15 Թայնժամ զարձաւ սատանայ առ քարտուղարն
 և ասէ. Եթե՛ կամիս ինձ մատուցանել զեր-
 կըրպագութիւն աստուածային և իմ ծառայ
 լինել և զՔրիստոս ուրանալ, նստուցից զքեզ
 ընդ աջմէ իմմէ և բազում մեծութիւնս տաց
 20 քեզ։ Ի՞նչ քարտուղարն առժամայն խաչակե-
 քեալ զինքն յայտնապէս խոստովանեցաւ զնե-
 քըն գոյ ծառայ Քրիստոսի Աստուծոյ։ Եւ
 իսկոյն ամենայն բազմութիւն գիւաց յերկիր
 կործանեցաւ։

- 23 Յետ այսորիկ յորժամ՝ քարտուղարն ընդ տեսան իւրում եմուտ յեկեղեցին և առաջի փրկչական պատկերին երկոքեանն կանգնած էին, տէրն տեսանէր զի պատկերն այն անթարթ նայէր ի քարտուղարն, զոր տեսնալ տէրն զարմացաւ և հրամայեաց պատանւոյն յաջմէ իւրմէ կանգնել և ահա տեսանէր զի պատկերն յայն կողմն զերեսս դարձոյց և մեծաւ զգուշութեամբ ի քարտուղարն նայէր:
- 30 Դարձեալ հրամայեաց պատանւոյն ի ձախմէ իւրմէ կանգնել և ահա պատկերն միւսանգամ ի յայն կողմն գալս իւր դարձոյց և մեծաւ քաղցրութեամբ ի նա հայէր, Յայնժամ տէրն երգմեցոյց զնա զի պատմեսցէ նմա թէ իւր իւրիւր այսպէս հաճոյ եղև Աստուծոյ, զի պատկերն ի նա այնպէս քաղցրութեամբ հայէր, Պատասխանի ետ թէ Աշինչ բարի մասն ունիմ, միայն զայն, զի ոչ կամեցայ զՔրիստոս ուրանալ առաջի սատանայի (Ա ձեռ. 63^{ա.բ}):

նութիւնից տասնեակ տարիներ առաջ: Այսպիսով ուրեմն՝ մնում է միակ հնարաւորը, այն է՝ ենթադրել, որ Հայելին և Առակազիրքը ունին այս պատմութեանց համար ընդհանուր աղբիւր, թէև այդ աղբիւրը լինի ոչ անմիջական, այլ շատ հեռաւոր:

Գալուստ Տէր Մկրտչեան

15 յունուարի 1900.



ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՅՈՒ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(ՔՆՆԱԿԱՏՈՒԹԻՒՆ ԷՆ ՈՒՍՈՒԱԾՔ)

(Ետնաւորութիւն) *

2.

ԱՆԳԵՂ ՏՈՒՐԻՔԻ ԱՌԱՍՊԵԼԸ

Անգեղ տուն եւ Անգեղեայ:— Ո՛րն է բուն առասպելը խորհեացու մէջ ոչ մի աղանարկութիւն չկայ թէ նա ժողովրդական երգից կամ առասպելից առած լինի Անգեղ

Կիլիկիայում: Ռուսի և Խորհրդային Պետության երեք ՌԿԻ բուին յիշած կարողիկոսը Յովնանեկ Դ. Անրայիցի կ: Մտիքարգմանութեամբ դուրս է գալիս, որ Պետրոս Բ. Խորհրդային Վարդանայ առակները գրել է Ասենի Բարանաւում: «Я, недостойный священникъ Петръ, мною потрудился надъ этою книгою, куда писалъ въ Аменской пещерѣ: у меня убогаго было много усердія (կը 105). Ծանոթութեան մէջ էլ տեղացնում է Մանր, որ Ասենի Բարանայ կարող էր գտնուել Ասենեան կրճատ կամ ճարտ (ծն. Аменского ущелии), Կուր գետի հարաւային օժանդակ Ասեն գետի վրայ, և թէ Վախուշի վիշապներէր Ասեն տաւանում պարտէին նաեւ հայեր եւլն: Այս բոլորը հիմնուած է յիշատակարանի հետեւեալ խօսքերի վրայ, «ես անարժան Պետրոս երեքս յոյժ աշխատեցայ յայտն աստի, որ գրեցի յայրի ասենիս, բարձանիս շատ էր աղմակս»: Իմ կարծիքով յայրի ասենիս» բառը կը յայտնուի լատինական եւ հայկական ոչ թէ Ասենի այլ Բարանայ, այլ «այրի» այրեացած ասենի կամ ասենիս, այսինքն այրի ծամանակ, երբ իրիցիկը վախճանուած էր»: Խորհրդային շատ հզօր չէ ուղղագրութեան մէջ և գրում է «շուտուեայս» ուտուեայս, ընդերմուտեայս—ընդերմուտեայս, բարձաշարեայս—բարձաշարեայս, եւլն եւլն, ուտի և կարող էր գրել «այրի»—այրի, կամ իրեւ նախդրով յայրի ասենիս:

* Տես Արարատ 1900 համար Բ. է. 86:

Որչափ որ անվիճելի կարելի է համարել, որ այս երկու պատմութեանց հիմնական միտքը նոյնն է Աղուէսազրբի վերեւում նշանակուած առակների հետ մեզ համար նոյնչափ հաստատուն է, որ որեւէ առնչութիւն չկայ այս կէտերում Աղուէսազրբի և Հայելու միջև: Բացի ոգու, խմորագրական և այլ տարրերով թիւններից, կայ այն հանգամանքը, որ Աղուէսազրբի այդ երեք առակները միմեանց կից, մէկը միւսի ետեւից, գտնուում են Մառի Վանագրութեան որ է Պարիզի Ազգային մատենադարանի օրինակը, գրուած ՌԿԻ.— 1615 թուին *, ուրեմն Հայելու հայերէն թարգմա-

* Յիշատակարանի մանրամասնութիւնները ձեռ Մառի երկարորութեան մէջ I հատ. էջ 104—5. գրիւն է Խորհրդային Պետության երեք: Խորհրդային ձեռը յայտնի չէ, եմբայրուստ է լինել Կիլիկիայում (ձեռ նոյն ձեռը էջ 105 ծանօթ. 2): Մացողն է ունի Մրայիւն արհիւսիսկոսոս, որ նոյն ՌԿԻ բուին ձեռնագրուել է Յովնանեկ կարողիկոսից. «Արդ ես Մրայիւն կիլիկոսոս զիւրգ հայրապետութեան ի յանձն առի ի քիլիկ Ռ. ԿԻ. ձեռնն իմոյ ի ձեռ Յովնանեկ կարողիկոսեան»:

Այս 1615 բուին՝ կամ մի քանակ քառի առաջ կամ յետոյ այդ բուին՝ Էլմիսմի Յովնանեկ կարողիկոս լիւյ, բայց 1601-ին, 1606-ին, 1608-ին յիշում է Յովնանեկ կարողիկոս Սոյ (Յովնանեկ Դ. Անրայիցի բոս Աշխանի, ձեռ Սիւսում էջ 218, 260 եւ յաւելում 546, 540, նաեւ Տաշեան ցուց. էջ 358, 431, 526, 394, եւլն.) որ կարող էր ապրած լինել նաեւ 1615-ին և թերեւ յետոյ է: 1615-ին կարող էր այս Յովնանեկ կարողիկոսից ձեռնագրուած լինել եւ Մրայիւն կիլիկոսոս, որ և նոյն բուին գրել տեղ մեզ գրադիցնող Առակագիրքը. Ռեւան ամենայն հաւանականութեամբ այս ամենը ձեռն ունեցաւ